

**Ռաֆիկ Նահապետյան**

*Պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր*

**ՎԱՂ ՄԻՋՆԱԴԱՐՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀՈՒՄԱՆԻՏԱՐ ՄՇԱԿՈՒՅԹԻ ՈՐՈՇ  
ՏԱՐԵՐԻ ԲՆՈՒԹԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ ՓԱՎԱՏՈՍ ԲՈՒՋԱՆԴԻ  
«ՀԱՅՈՑ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ» ԵՐԿՈՒՄ\***

**Կրթություն:** Պատմիչը հաղորդում է բացառիկ ուշագրավ տեղեկություններ կրթության, գրի և գրականության վերաբերյալ: Նա գրում է, թե «զանազան տեղերում, Հայաստանի բոլոր գավառներում Ներսես Մեծ եպիսկոպոսապետը հիմնեց հունարեն և ասորերեն լեզուներով դպրոցներ» (IV դար., գլ. Դ, էջ 123):

Պատմիչը անկրթության հետևանք էր համարում ատելությունն ու նախանձը իրար դեմ, չարականությունն ու թշնամությունը, ռիսակալությունը, իրար խածատելը, ընկերին և եղբորը նենգելը, դավեր սարքելը սիրելիները սիրելիների, մերձավորները մերձավորների, ընտանիքներն ընտանիքների, ազգականներն ազգականների, խնամիները խնամիների նկատմամբ, մարդիկ ծարավ էին մեկը մյուսի արյունը խմելու, ճիգ էին թափում իրար վնասելու, անուղղա վարքի և անխելքության պատճառով (տե՛ս մանրամասն III դար., գլ. ԺԳ, էջ 55): Նույն մտահոգությամբ գրում է նաև, թե «Աստվածների հին պաշտամունքները կատարում էին գիշերները՝ նման պոռնկական գործի. ոմանք հենց իրենց վրա կատարում էին նույն պոռնկական ցանկությունը: Ուստի ո՛չ խելացի խրատի էին լսում և ո՛չ հնազանդվում էին առաջնորդների քարոզած աստծու պատգամներին...» (էջ 57): Այդուհանդերձ, իր ժողովրդին գրասեր համարելով՝ գրում է, թե «նրանք սիրում էին իրենց առասպելների երգերը, վիպասանությունները, նրանցով կրթվում էին, նրանց հավատում էին, նրանց մեջ հարատևում» (III դար., գլ. ԺԳ, էջ 55): Բայց և միաժամանակ դառնությամբ է նշում, թե քրիստոնեությունն ընդունեցին ոչ թե գիտությամբ, ինչպես որ հարկն էր, այլ հիմնականում միայն նրանք, ովքեր շատ թե քիչ տիրապետում էին հունական կամ ասորի գրագիտությանը: Նախարարների և շինականների խառնիճաղանջ բազմությունը, ինչպես փոքր երեխաներին է բնորոշ, զբաղված էր անօգուտ բաներով, իրենց ժամանակը մաշում էր պարսավելի կրթություններով, խուժադուժ բարբարոսական մտքերով:

**Ժողովրդական բանահյուսություն:** Փավստոս Բուզանդը իր «Պատմություն»-ը գրելիս մեծապես օգտվել է ժողովրդական բանահյուսությունից: Նրա գիրքը լեցուն է ժողովրդական բանավոր խոսքի բազմաթիվ նմուշներով: Այդ երկուն բավականին շատ են անեկդոտների, անեծքների, օրհնանքների, ժողովրդական այլ ստեղծագործությունների նմուշներ, որոնք առանձին ուսումնասիրության կարիք ունեն: Հարկ ենք համարում բերել դրանցից մի քանիսը. «Երկու խոզ ու մի էշ այսքան երկար ճանապարհ քշեցի և դու դեռ ասում ես, թե ինչո՞ւ ես քրտնել» (Դար. IV, գլ. Ը, էջ 155):

\* Այս հոդվածը շարունակությունն է «Պատմություն և մշակույթ» հանդեսում (2012, 9) տպագրած հեղինակի աշխատության:

Կամ՝ «Կատաղախոս, շնաբերան Փիսակ» (Դպր. III, գլ. Ի, էջ 81), «Չենց մազերից երևում է, որ դա կախարդ է, որովհետև մազերը սպիտակ են, մորուքը սև» (Դպր. IV, գլ. ԾԶ, էջ 269) և այլն: «Պարսից փտոռապետը շրջելու ելած հայոց արքային (Արշակ II) ոչ միայն ուշադրություն չդարձրեց և մեծարանքի չարժանացրեց, այլև պարսկերեն լեզվով ասաց. «Այծ-հայերի թագավոր, եկ այս խոտի խրձի վրա նըստիր»: Երբ այս խոսքերը լսեց մեծ Չայոց զորավար և սպարապետ Վասակը՝ Մամիկոնյան տոհմից, սաստիկ բարկացավ ու զայրացավ, քաշեց իր սուրը, որ մեջքից կախած ուներ, զարկեց տեղնուտեղը գլխատեց պարսից փտոռապետին հենց փտոռի մեջ, որովհետև նա չկարողացավ տանել այն անարգանքը, որ հասցրեց իր թագավորին...» (IV դպր. գլ. ԺԶ, էջ 197): Չայտնի է, որ հին ժամանակ սովորություն կար, որ գավառները մեկը մյուսին ծաղրական կամ արհամարհական մակդիրներ էին կացնում, ինչպես ագուլեցոց՝ **գոկ**, հին մախիջևանցոց՝ **խաշագող**, նոր մախիջևանցոց՝ **հածե**, փխալցխացոց՝ **կռո**, երևանցոց՝ **շան ծրագ**, պոլսեցոց՝ **հոսոս** և այլն: Թվում է՝ «այծ» մակդիր է եղել Պարսկաստանում հայերի համար. այս բառը ասելով, կարելի է կարծել, որ նկատի են ունեցել Չայաստանի լեռնոտ երկիր լինելը և ժողովուրդը սովոր է եղել մագլցել լեռների վրա՝ ինչպես այծերը: Չնարավոր է, որ փտոռապետը ոչ թե անարգելու նպատակով, այլ համաք անելով, այս մակդիրն է տվել Արշակին՝ հրավիրելով խոտի խրձի վրա նստել: Նա գուցե ընկերական համաք է արել, մոռանալով, որ խոսում է թագավորի հետ (Բուզանդ, ծանոթ. 115, էջ 433-434):

Գիրքը լեցուն է անեծքներով: Մեջ ենք բերում Ներսես Մեծի բանադրանքի խոսքերը՝ ուղղված Արշակ թագավորին՝ անմեղ Գնել պատանուն նենգաբար սպանելու հրաման արձակելու համար: «Տիրոջ (երկրորդ) գալստյան ժամանակ հավիտենական կրակի սպառնալիքը ձեր վրա հասնի, ընկնեք խավարի մեջ և այլևս չտեսնեք Աստծու որդու փառքի արևը, Կայենի անեծքին գաս, կենդանույն թագավորությունիցդ զրկվիս և չարչարանքներ կրես քո Տիրան հորից ավելի (նրան պարսից արքան կուրացրել էր՝ աչքերը կրակով դաղելով) և դառն մահվամբ մեծ նեղության մեջ կյանքդ վերջացնես, կործանվեք Արշակունյաց ցեղով» (IV դպր., գլ. ԺԵ, էջ 189): «Ինչպես որ քարը օձը խցկում է իր ականջները, որպեսզի ճարտար թովիչի ձայնը չլսե և դեղ չընդունե իմաստուն դեղատվից՝ այնպես էլ դու ականջներդ խցկեցիր, լսողությունդ փակեցիր, որպեսզի աստվածային խոսքի խրատը չլսես, այլ զազանների բարք ստանալով՝ սկսեցիր մարդիկ ուտել: Ուստի ինչ-որ զազանների մասին է ասված՝ քեզ վրա կկատարվի: Ասված է. «Աստված նրանց ատամները նրանց բերաններում կփշրե, և առյուծների ժանիքները տերը խորտակեց»: Որովհետև դու քո տիրոջ Քրիստոսին դեմ դարձար՝ ուստի անպիտան ու անարգ դառնաս ինչպես թափված ջուրը, և տկարանաս՝ իբր նրա աղեղը լարե» (IV դպր. գլ. ԺԵ, էջ 189):

**Չավատք:** Կարելի է հանդիպել հեթանոսական պաշտամունքի բազմաթիվ մնացուկների: Ինչպես հայտնի է, IV դարի հենց սկզբում քրիստոնեությունն արդեն պետական կրոն էր հաստատված Չայաստանում, բայց Բուզանդի երկրում տեսնում ենք, որ Գրիգոր Լուսավորչի, Տրդատ արքայի և սրանց հաջորդների ջանքերը տակավին արմատախիլ չէին արել հեթանոսական կրոնը մեր երկրում, դեռ երկար ժամանակ պայքար էր մղվում այդ հողի վրա: Այդ առթիվ Բուզանդը տեղեկացնում է, որ Տրդատի որդի Խոսրովի թագավորության և Գրիգոր Լուսավորչի որդի Վրթանես կաթողիկոսի օրոք դեռ շատերը գաղտնի շարունակում էին պաշտել հին աստվածներին:

Առիթը եկած ժամանակ նրանք նույնիսկ կռվի էին դուրս գալիս նոր կրոնի ներկայացուցիչների դեմ: Այդ կռիվների ղեկավարներն էին քուրմերը, իսկ կռվի վայրը այն տեղերը, ուր մի ժամանակ մեհյաններ<sup>1</sup> կային, իսկ այժմ դրանց փոխարեն Աստծո տաճարներ էին կանգնած: «Այս ժամանակները, - նկատի ունի Խոսրով արքայի կառավարման շրջանը՝ 333-338 թթ., - (մի անգամ) Վրթանես եպիսկոպոսապետը գնացել էր Չայոց Մեծ և առաջին մայր եկեղեցին, որ գտնվում է Տարոն գավառում, որտեղ դեռ վաղ ժամանակ, մեծ քահանայապետ Գրիգորի օրերում կատարված նշաններով (զորություններով) կործանվել էին մեհյանների բազիլիկները» (III դպր., գլ. Գ, էջ 15): Այս (Աշտիշատի մայր եկեղեցին) էր համարվում «Չայրապետական աթոռի իշխանությունը», որտեղ ձեռնադրվել էր ազգությանը ասորի Դանիելը «Մեծն Գրիգորի ձեռքից այն ժամանակ, երբ նա կործանեց Չերակլի՝ այսինքն Վահագնի Մեհյանի բազիլիկները, որտեղ և հիմք դրեց առաջին սուրբ եկեղեցին» (III դպր., գ. ԺԴ, էջ 61): Ըստ պատմիչի Չերակլի բարձրադիր մեհենատեղից ներքև, Ցուլ կոչված մեծ լեռան դեմուղեն, «մի քարընկեց հեռավորությամբ դեպ ներքև» էր գտնվում այն սուրբ աղբյուրը և հացիների (հացի ծառերի) պարտեզը, որտեղ Գրիգոր Լուսավորիչը կատարեց բազմաթիվ զորքերի մկրտությունը (III դպր., գլ. ԺԴ, էջ 63):

Փավստոսն ունի ակնարկներ «Արարատյան գավառում Քրիստոսի նախավկանների՝ Գայանեի ու Չռիփսիմեի (մասին), որ այնտեղ թաղված էին իրենց հավատակիցների հետ միասին» (III դպր., գլ. ԺԳ, էջ 61): Ներսես Մեծի օրոք Չայոց աշխարհի բոլոր եպիսկոպոսները ժողովվեցին՝ Աշտիշատ գյուղում, նախնյաց եկեղեցական ժողովների ժողովատեղում՝ աշխարհական կարգերը բարեկարգելու, հավատի ընդհանուր կանոններ սահմանելու: Այս ժողովում «կարգ ու կանոն սահմանեցին, կազմակերպեցին և Չայոց աշխարհի բոլոր ժողովուրդը դարձրին իբրև վանականների մի ընդհանուր միաբանություն» (IV դպր., գլ. Դ, էջ 119): Այդպիսի վայրերից էր հատկապես Աշտիշատը, որտեղ էլ, ինչպես նշվեց վերը, կառուցվել է առաջին մայր եկեղեցին:

Չայոց եպիսկոպոսները՝ թագավորի, մեծամեծների, նախարարների և ժողովրդի խառը բազմության հետ միասին պատվել էին այն տեղերը, որոնք առաջ կուռքերի պատկերների տեղեր էին և հետո Աստծու անունով այրվեցին ու դարձան աղոթքի տներ և ուխտատեղիներ բոլորի համար: Մանավանդ սովորություն ունեին «ժողովվել այն գլխավոր եկեղեցին և կատարել այնտեղ եղած սրբերի հիշատակը տարեց տարի»՝ հայոց տոմարի երրորդ ամսին՝ Սահմի ութին:

Բուզանդը հիշատակում է Անահիտի մեհյանի մասին. «Երկու անապատական կրոնավորներ կային, որոնք նստում էին լեռներում, մեկի անունը Շաղիտա, որ ազգով ասորի էր և նստում էր Առյուծ լեռնում, մյուսի անունը Եպիփան, որ ազգով հույն էր և նստում էր մեծ լեռնում, աստվածների (մեհյանների) տեղում, որ կոչվում էր Անահիտի աթոռ» (Դպր. V, գլ. ԻԵ, էջ 335): Աշտիշատում էր գտնվում Վահագնի մեհյանը:

Չին և նոր կրոնների միջև ընդհարումներ սովորաբար տեղի էին ունենում տոնախմբությունների ժամանակ, երբ հին հավատի պաշտպանները ավելի խորապես

<sup>1</sup> «Մեհյան» բառը ծագում է պահլավական meh = միիր բառից՝ հայերեն «յան» մասնիկով, ուրեմն նշանակում է Միիրական պաշտամունքի տաճար, որտեղ անշեջ կրակ էին պահում: Բացի սրանից ընդհանրապես նշանակում է հեթանոսական պաշտամունքի տաճար, կռատուն, երբեմն նաև բազիլ: «Բազիլ» ծագում է պահլավերեն bag = աստված բառից, ըստ այդմ մեհյանը համապատասխանում է մեր եկեղեցուն, իսկ բազիլը՝ սեղանին: Բազ արմատից շատ բառեր կան հայերենի մեջ, որոնց թվում՝ Բազավան, Բազարան, Բազայ-առինճ» (տե՛ս Փ. Բուզանդ, ծանոթ. 7, էջ 420):

զգում էին կրոնական իրենց զբաղմունքների ոտնահարվելը. «Այսպիսի դեպք եղավ այն ժամանակ, երբ Վրթանես մեծ քահանայապետը սակավաթիվ մարդկանցով շըրջում էր առանձին՝ օրհնության պատարագ մատուցանելիս: Արդ՝ այն մարդիկ, որոնք մինչ այդ ժամանակ գաղտուկ պահում էին հեթանոսական կռապաշտական սովորությունները, մոտ երկու հազար հոգի, միասին ժողովելով՝ խորհուրդ արին, սպանել աստծո քահանայապետ Վրթանեսին: Այս բանն անելու նրանք համարձակեցան մասամբ նաև թագավորի (Խոսրով III) կնոջից, որովհետև սուրբը նրան հանդիմանում էր գաղտնի շնության՝ պոռնկության վարքի պատճառով: ...Սրանք աշխարհավեր, աշխարհակեր, չարագործ քուրմերի սերունդներն էին, նրանց տոհմից» (Դպր. III, գլ. Գ, էջ 17): Մեկ այլ անգամ գրում է նաև, թե «Աստվածների հին պաշտամունքները կատարում էին գիշերները՝ նման պոռնկական գործի, ոմանք հենց իրենց վրա կատարում էին նույն պոռնկական ցանկությունը»: Ուստի ո՛չ խելացի խրատի էին լսում և ո՛չ հնազանդում էին առաջնորդների քարոզած աստծու պատգամներին, այլ նրանց հանդիմանական խոսքի համար նրանց ատում էին, հալածում, սպանում» (III դպր., գլ., ԺԳ էջ 55-57): Պատմիչը Տիրանի թագավորության ժամանակը «անպիտան ու անմիտ» է համարում, քանզի նրա կատարած չարությունները բոլոր դարերից գերազանցեցին: Ամենամեծը այն էր, որ իրենց գլխավորին և առաջնորդին (Հուսիկ կաթողիկոսին) բրածեծ անելով սպանեցին, որովհետև կաթողիկոսը արգելել էր արքային իր չարագործությունների համար տարեկան տոնի առիթով շքախմբով մտնել եկեղեցի: Նրա մահից հետո ամեն ոք վարվում էր իր ուզածի պես (նույն տեղում):

Այս գլխում Փավստոս Բուզանդը քրեայիսկոպոս, եկեղեցիների վերակացու Դանիելի խոսքերով հանդիմանում է հայ արքաների, Տիրանի գործած «ստություններն ու պղծությունները», առաքելական հայ եկեղեցու քահանայապետերի (Հուսիկ կաթողիկոսի) նկատմամբ գործած դաժան արարքները, որոնց պատճառով եկեղեցիարքա, եկեղեցի-պետություն անմիաբանությունը կհանգեցնի թագավորության, պետականության վերացմանը. «Դուք կցրվիք ու կբաժանվիք, ձեր սահմաններն էլ Իսրայելացոց նման ցրիվ կգան. դուք կմնաք անտեր, անխնամ, ոչ ոք ձեզ չի խնայի. դուք խաշներ կդառնաք, որոնք հովիվ չունին: Ինչպես (ոչխարների) հետ՝ կմատնվիք գազանների ձեռքը, ձեր փառքերից կզրկվիք, օտար թշնամիների ձեռքը կմատնվիք իբրև գերի, նրանց ծառայության լծի տակ կընկնիք, և այս ծառայության լուծը երբեք ձեզանից չի վերանա և չի պակասի, ձեր պարանոցից երբեք չի պակասի ծառայության՝ չարաչար ստրկության լուծը: ...Ինչպես որ Իսրայելը պատառվեց և այլևս չկարկատվեց, այնպես էլ դուք կցրվիք ու կկործանվիք. ձեր վաստակածը ուրիշները կվայելեն, ձեր զորությունը, ուրիշները կուտեն, և չի լինի մեկը, որ ձեզ փրկե...» (III դպր. գլ. ԺԴ, էջ 67):

Այդ առումով ուշագրավ է նաև այն միջադեպը, որ հիշատակում է Բուզանդը. Հուսիկ կաթողիկոսի որդիները՝ Պապը և Աթանագիներն, բոլորովին հակում չունենալով եկեղեցական դառնալու, դարձել էին զինվորական և ապրում էին հեթանոսների պես: Մի օր նրանք գնում են Աշտիշատ, ուր նրանց հոր պապի՝ Գրիգոր Լուսավորչի նախածեռնությամբ կառուցվել էր առաջին եկեղեցին, և սկսում են ծաղրել Աստուծո տունը, ապա մտնում են այնտեղի եպիսկոպոսանոցը, և «ընպե՛ն գինի բոզերի, վարձակների (երգող, պարող կին. - Ռ. Ն.), գուսանների և ծաղրածուների հետ: Նրանք

աստծուց երկյուղ չունենին, կյանք էին վարում մեծ անառակությամբ և գիճուքամբ, աստվածային կարգերն արհամարհում ու ծաղրում էին» (III դպր., գլ. ԺԹ, էջ 77):

Պատմիչը քրիստոնեական հավատքից շեղվելու, ոչ ջերմեռանդ երկրպագելու հետաքրքիր բացատրություն է տալիս: Այդ կրոնը «հանձն առան հարկադրված՝ իբրև մի մարդկային սովորություն, իբրև մի մոլորություն, առանց ջերմեռանդ հավատի: (Կրոնն ընդունեցին) ոչ թե գիտությամբ, հուսով ու հավատով, ինչպես որ հարկն էր, այլ միայն քչերը, որոնք փոքր ի շատե ծանոթ էին հունական կամ ասորի գրագիտության՝ մասամբ հասկանում էին այդ կրոնը» (III դպր., գլ. ԺԳ, էջ 55): Այս հատվածում նկատելի է նաև, որ մինչև մաշտոցյան գրերի գյուտը Հայաստանում գրագետ մարդկանց կրթությունը հունարենն ու ասորերենն է եղել: Մեկ այլ առիթով էլ գրում է, թե քրիստոնեությունից շեղվելու պարագայում (երկրում) «կթագավորե ստությունը՝ անզուսպ, անձնասեր, արծաթասեր, խաբեբա, անվստահելի, անպիտան, ստախոս, բանսարկու մարդկանց ձեռքով, այնպես որ շատ քչերը կմնան որ կարողանան հաստատ պահել հավատի ուխտը» (III դպր., գլ. Ե, էջ 75):

Բուզանդը հաղորդում է նաև քրիստոնեական հավատքից շեղվելու և դավաճանաբար թշնամու կողմն անցնելու մասին: Նա գրում է, թե հայրենիքին դավաճանած և թշնամու կողմն անցած Վահան Մամիկոնյանը և Մերուժան Արծրունին «այս երկու պիղծ, անօրեն, դժնյա մարդիկ, որոնք ետ էին կացել աստվածապաշտության ուխտից և ուրացությամբ հանձն էին առել ու պաշտում էին մազդեզական անասոված կրոնը» (դպր. IV, գլ. ԾԹ, էջ 175, գլ. ԻԳ, էջ 219): Մազդեզական կրոնը նույն զրադաշտական կրոնն է, այսինքն երկրպագություն արեզակին և կրակին՝ բազմաթիվ ծիսական պատկերներով: Մազդեզն պահլավերեն բառ է – mazdêsn, կրճատված է Արամազդ բառից և նշանակում է Արամազդին պաշտող:

Նրանք ամենուրեք ավերում էին եկեղեցիները և հարկադրում աստվածապաշտությունը թողնել, հակառակվողներին չարաչար մահով էին սպանում, կանանց բարձր աշտարակներից կախում էին մերկացած, գլխիվայր: Այդպես վարվեցին «Ռշտունյաց գավառի տիրոջ՝ Գարեգինի կին Համազասպուհու հետ: Շատ տեղերում ատրուշաններ էին շինում, մարդկանց բռնի հնազանդեցնում էին մազդեզական կրոնին, իրենց սեփական կալվածներում էլ շինում էին շատ ատրուշաններ և իրենց ազգականներին տալիս էին մազդեզական կրոն սովորելու»: Ահա թե ինչու «Վահանի մի որդին Սամվել անունով, զարկեց սպանեց իր հոր Վահանին և իր մոր Ռմիգդուխտին, Պարսից Շապուհ թագավորի քրոջը և ինքը փախավ գնաց Խաղտիքի աշխարհը» (IV դպր. գլ. ԾԲ, էջ 275, 277):

Փավստոս Բուզանդի հաղորդմամբ հեթանոսական այն սովորույթները, որ Աստղիկի պաշտամունքի հետ էին կապված, դեռ չէին անհայտացել ժողովրդի միջից: Նա գրում է նաև, թե «Ներսես Մեծի այս աշխարհից գնալուց հետո շատ մարդիկ դարձան նախկին կռապաշտությանը. Հայաստանի շատ տեղերում կուռքեր կանգնեցրին Պապ թագավորի թույլտվությամբ, որովհետև չկար մեկը, որ հանդիմաներ, չկար մեկը, որից քաշվեին, այլ ամեն մարդ համարձակ գործում էր՝ ինչ որ կամենում էր, շատ պատկերներ էին կանգնեցրել և նրանց երկրպագում էին» (V դպր., գլ. ԼԱ, էջ 351-353): Այս հաղորդման մեջ նկատելի է ևս մի իրողություն՝ IV դարում հեթանոսական պաշտամունքը՝ կռապաշտությունը դեռ ամբողջովին իր տեղը չէր զիջել քրիստոնեությանը, վերջինս դեռ համատարած չէր:

**Տոներ:** Պատմիչն ակնարկներ ունի նաև տոնացույցի, տոնական արարողությունների վերաբերյալ, հատկապես Նավասարդի մասին, որն ըստ նրա Հայոց արքունիքը նշում էր Բագավանում հատուկ ճոխությամբ: Իսկ Հովհաննես Մկրտչի հիշատակի տոնի վերաբերյալ գրում է. «Գրիգոր Լուսավորչի և Տրդատ արքայի կողմից սահմանված էր այն անցկացնել Բագավան ավանում: Այդ տոնին ելել էին աշխարհական մարդկանց մեծ բազմություն և զանազան գավառներից շատ եպիսկոպոսներ: Բանակում կաթողիկոսի ներկայությամբ գիշերային մեծ պաշտամունք՝ նախատոնակ կատարվեց» (Դպր. IV, գլ. ԺԵ, էջ 185-187):

Այս տոնը Փ. Բուզանդի հավաստմամբ հին Հայաստանում մեծ հանդիսությամբ էր կատարվում, որի առթիվ հավաքված բազմությունն իր հետ բերում էր Նոր տարվա՝ Նավասարդի պտուղների առաջին բերքը: Ամանորի ժամանակ կատարվում էին մեծ շուքով արարողություններ. կազմակերպվում էին ձիարշավներ, եղջերուների վազք և բազում այլ մրցույթներ ու խաղեր: Դրանք, պատմիչի վկայությամբ կատարվում էին Բագրևանդի Բագավան դիցավանդում, որը հին Հայաստանի նշանավոր ուխտավայրերից էր, ուր հեթանոսության շրջանում կանգնեցված էր Ամանորի աստծո՝ Վանատուրի կուռքը: Ըստ ավանդության հայոց Տիգրան Գ թագավորը հատուկ հյուրատուն է կառուցել և իր եղբոր՝ Մաժան քրմապետի գերեզմանի վրա մեհյան կանգնեցրել: Այստեղ իջևանում և հյուրասիրվում էին նույնիսկ օտարերկրացի անցորդներ: Պատահական չէ, որ Ամանորը նախ և առաջ ճանաչվում էր որպես հյուրընկալության աստվածություն: Իսկ տոնը տևել է Նավասարդ ամսի 1-ից մինչև 6-ը, որի բազմահազար մասնակիցները ոչ միայն Հայաստանի տարբեր գավառներից էին, այլև հարևան երկրներից: Ահա թե ինչու Արշակ II արքան հենց այդ օրերին իրականացրեց իր չար մտադրությունը Գնելի նկատմամբ. «Թագավորը (Գնելին ասաց Վարդան Մամիկոնյան մեծ նահապետը), չկամեցավ Նավասարդի տոները առանց քեզ անցկացնել. նա այժմ բարեհաճ է դեպի քեզ, որովհետև իմացավ, որ քո մեջ չկա չարություն, ինչպես որ չարախոսներն էին ասում. նա հանդգնեց, որ մինչև այժմ իզուր էր քեզ ատում, մինչդեռ դու նրա կողմից արժանի ես սիրո» (IV դպր., գլ. ԺԵ, էջ 185): Խաբեությամբ Գնելին, իր կնոջն ու տանու մարդկանց հրավիրեց արքունի բանակ, որը Բագավանում մասնակցում էր նավասարդյան տոնակատարություններին (նույն տեղում):

Հանդիպում ենք նաև տեղեկություններ պաս պահելու սովորույթի մասին. «Քո (խոսքը ուղղված է Արշակ II թագավորին. – Ռ. Ն.) գործած մեղքերի համար բոլոր աշխարհին հրաման կտանք, որ քո փոխարեն պաս պահեն, խնդրվածք անեն, և մենք էլ քեզ հետ միասին ապաշխարության մեջ մտնենք, գուցե տերը ներե քո գործած անչափ մեղքերը» (IV դպր. գլ. ԺԳ, էջ 175):

Սեկ այլ առիթով էլ (մասքուօ հրոսակների հարձակմանը ենթարկվելիս) գրում է, թե Հայոց արքա խոսրովը և Հայոց ծերունի եպիսկոպոսապետը՝ Վրթանեսը. «սկսեցին պահք պահել և աստծուց խնդրել, որ նրանց փրկե այն դառն դահճից...» (III դպր., գլ. Է, էջ 29): Այդ նույն կերպ «Հայերեն խոսող ամբողջ աշխարհը բոլոր գավառներում, կողմերում, տեղերում, մեծամեծ աշխարհակալները, գավառատերերը, նշանավոր ցեղերի նահապետները և ամբողջ քահանայական ուխտը ժողովրդի բազմության հետ ընկղմված էին սգի ու տրտմության մեջ, որովհետև հեռացավ իրենց գլխավոր հովվապետը, որը 9 տարով աքսորվել էր բյուզանդական կայսեր կողմից: Ահա թե ինչու նրա տեղապահ «Խաղ սուրբ եպիսկոպոսը բոլոր աշխարհին

(հայոց երկրին) հրաման էր տալիս պաս պահել, աղոթք անել, խնդրել, որ սուրբ Ներսեսը ետ դառնա: ...ժողովուրդը պահեցողությամբ աղոթում էր նրա համար» (IV դպր., գլ. ԺԲ, էջ 167):

Մեծ Պասը կամ Մեծ Պահքը հնուց ի վեր ներկայացնում է բավական ընդգրկուն ծիսահամալիր, որը սկսվում է Բուն Բարեկենդանի ավարտով և վերջանում օգոստոսի հարության կամ Մեծ Ջատկի տոնով: «Պաս» կամ «պահք» նշանակում է հրաժարվել որոշ տեսակի կերակուրներից, մասնավորապես՝ մսեղենից, կաթնեղենից, ձվից և նվիրվել զղջումի ու ապաշխարության: Մեծ Պասի ծագումը կապված էր անապատում Քրիստոսի աղոթքով ու ապաշխարությամբ անցկացրած դժվարին օրերի հետ: Աստվածաշնչում հիշատակվում է սատանայի կողմից Հիսուսին փորձության ենթարկելու և նրա նկատմամբ Աստծո որդու հաղթանակի մասին:

Ավանդական կենցաղում պահպանված այդ ծիսաշարի շատ տարրեր հնագույն ծագում ունեն և առնչվում են գարնանային տոնակատարության՝ Նավասարդի հետ:

Պատմիչը գրում է նաև, թե Վրթանես քահանայապետը օրենք սահմանեց (մեր) աշխարհում տարեցտարի արժանապես պատվել հայրենիքի փրկության համար քաջի մահով ընկած նահատակների հիշատակը: «Կանոն դրեց՝ սրանց անունները հիշել աստծու սեղանի առաջ պատարագի ժամանակ՝ երբ սրբերի անունները հիշվում են. որոնցից հետո սրանք, իսկ ընկածների մնացորդներին գութ և խնամք տանին» (III դպր., գլ. ԺԱ, էջ 47):

Ուշագրավ ակնարկներ կան Ս. Սարգսի վերաբերյալ: Սուրբ Սարգիսը հայերի մեջ մեծ ժողովրդականություն է վայելում և համարյա ազգայնացրած սուրբ է, որի անվան հետ կապված են զանազան սնոտիապաշտություններ: Նրա անունով շատ եկեղեցիներ, տաճարներ կան, այդ թվում՝ և Հայաստանում:

Բուզանդի գրքում խոսվում է այն երկուսի մասին, որոնք կյանքից պետք է զրկելին շատ արտեր անմշակ մնալու, շատ այգիներ խափանելու, մշակներին անգործ թողնելու, քրիստոնյա ժողովուրդներին հալածելու պատճառողին՝ Վաղես կայսրին: Դրանցից մեկը Սարգիսն էր, մյուսը Թեոդորոսը (IV դպր., գլ. Ժ, էջ 161): Խոսքը Կեսարեցի, Կապադովկիայից, զինվորական ծառայության մեջ և բարձր պաշտոնի Սարգսի մասին է, որը հեթանոս զորքի մեջ քրիստոնեություն էր տարածում:

**Հողի պաշտամունքի դրսևորումները: Գուշակություն:** «Ներսես Մեծ կաթողիկոսի մահից հետո շատերը նորից նախկին կրոնի գիրկը ընկան, կուռքեր կանգնեցրին և սկսեցին ազատ պաշտել հայրերի դավանած զորությունները...» (էջ 57):

Հայ-պարսկական բանակցությունների և Արշակ Բ-ի բանտարկության մասին (Դպր. IV գլ. ԾԳ) խոսելիս Բուզանդը անդրադառնում է պարսկական սովորույթին: «Արշակը նրանից (պարսից Շապուհ արքայից խնդրեց ուխտի հավատարիմ երդում, որ անկասկած լինելով գնա (Տիգրես – Ռ. Ն.): Շապուհը պարսից թագավորության հավատարիմ երդման օրինակով՝ բերել տվեց աղ, կնքեց վարազագիր մատանիով և ուղարկեց Արշակին, ասելով, որ եթե այդ երդումից հետո էլ չգա, ապա թող պատրաստվի պատերազմի» (Դպր. IV, գլ. ԾԳ, էջ 255): Վարազագիր մատանի նշանակում է այնպիսի մատանի, որի վրա փորագրված է լինում Վարագ՝ պարսից թագավորների գերբը: Վարազագիր մատանիով (ուրեմն պարսից թագավորների անձնական կնիքով) կնքված աղը ամենահաստատ, անսուտ երդման նշան էր: Վարագ անունը իբրև պատվանուն շատերը կցում էին իրենց անուններին, մատանու մեջ ազուցվում էր մի թանկագին քար՝ վրան փորագրված տիրոջ անունը, ուստի և ծա-

ռայում էր իբրև կնիք: Ի դեպ՝ հայկական սովորույթի համաձայն՝ հայոց արքաները երդվում էին Ս. Գրքի՝ ավետարանի վրա՝ ըստ Փավստոս Բուզանդի հավաստման (IV դար., գլ. ԾԴ, էջ 257):

Հայոց հողի ուժին, հողի պաշտամունքին էր նվիրված պատմիչի ընդարձակ նկարագրությունը (Դպր. IV, գլ. ԾԴ):

Պարսից արքան Հայոց արքա Արշակի հավատարմությունը պարսկական տերության հանդեպ ստուգելու համար իր մոտ է կանչում վիուկներին (դյուբոդներին), աստղահամաներին (աստղագետներին) և քավդեաներին (գուշակներին): Վերջիններս պարսից արքային խորհուրդ են տալիս. «...մարդիկ ուղարկիր Հայոց աշխարհը, բերել տուր այնտեղից՝ Հայաստանի սահմաններից մոտ երկու բեռ հող և մի ամանով ջուր: Հետո հրամայիր, որ քո խորանի (սենյակ) հատակի կեսի վրա շաղ տան Հայաստանից բերած հողը, ապա դու ինքդ Հայոց Արշակ թագավորի ձեռքից բռնած, նախ տար խորանի այն տեղը, որտեղ բնական գետինն է, և նրան հարցնունքներ արա: Հետո նրա ձեռքերը բռնած հայկական հող շաղ տված տեղը տար և լսիր, թե ինչ կխոսի, և այն ժամանակ կգիտենաս, թե երբ նրան արձակելու լինիս Հայաստան, քո ուխտն ու դաշինքը կպահե՞, թե ոչ: Որովհետև եթե (հայկական սովորույթի համաձայն. - Ռ. Ն.) հայկական հողի վրա խիստ լեզվով խոսի՝ իմացիր, որ Հայոց աշխարհը հասնելուն պես հենց նույն օրը նույն լեզուն կբանեցնե, նույն պատերազմը կնորոգե քեզ հետ, նույն ճակատամարտերը, նույն թշնամությունը կշարունակե» (Դպր. IV, գլ. ԾԴ, էջ 257):

Պարսից արքան հետևում է նրանց խորհրդին և «...խորանում երթևեկելիս, երբ ճեմում էին պարսկական հողի վրա՝ ասաց նրան. «Արշակ թագավոր Հայոց, դու ինչո՞ւ ինձ թշնամի եղար. ես քեզ որդու նման սիրեցի, կամեցա աղջիկս քեզ կնության տալ և քեզ ինձ որդի դարձնել, իսկ դու իմ դեմ խստացար, ինքդ քեզանից, հակառակ իմ կամքի, ինձ թշնամի դարձար և ահա ամբողջ երեսուն տարի է ինձ հետ պատերազմեցար» (Դպր. IV, գլ. ԾԴ, էջ 259):

Արշակ թագավորը ասում է. «Մեղանչեցի և հանցավոր եմ քո առաջ. որովհետև ես եկա, քո թշնամիներին հաղթեցի ու կոտորեցի և հույս ունեի քեզանից կյանքի պարգև ստանալու, բայց իմ թշնամիները ինձ մոլորեցրին, քեզանից վախեցրին և փախչել տվին: Եվ երդումս, որով քեզ երդվեցի, ինձ քո առաջը բերեց, ես հիմա քո առաջն եմ, քո ծառան, քո ձեռքի տակ եմ. ինչպես ուզում ես՝ վարվիր ինձ հետ, եթե կամենում ես՝ սպանիր, որովհետև ես, քո ծառան, շատ հանցավոր եմ քո առաջ, մահապարտ եմ»:

Շապուհ թագավորը նրա ձեռքից բռնած շրջում է ճեմելով և, իբրև միամտաբար, բերում է հայկական հող շաղ տված հատակի վրա: Իսկ երբ (Արշակը) այն տեղն է հասնում, հայկական հողի վրա էր ոտք դնում՝ սաստիկ ըմբոստանալով ու հպարտանալով լեզուն փոխում էր, սկսում էր խոսել և ասել. «Հեռո՛ւ ինձանից, չարագործ ծառա, որ տերերիդ վրա տեր ես դարձել, և ես չեմ ների քեզ ու քո որդոց իմ նախնիների վրեժը և Արտավան թագավորի մահը՝: Որովհետև այժմ դուք՝ ծառաներդ, մեր՝

---

\* Արտավանը (216-226) Պարսկաստանի պարթևական հարստության վերջին թագավորն էր: Ըստ ավանդության Պարթև թագավորները և թե Արշակունի թագավորները սերված էին Պարթև Արշակ Մեծից: Հայոց Արշակունիները Արտավանին համարում էին իրենց ազգական ու երկրորդ՝ Պարսկաստանի Պարթևներից հետո, որի համար էլ պարտավոր էին Արտավանի սպանության վրեժն առնելու:



ծեր տերերի՝ մեր բարձն (գահը) եք հափշտակել, բայց ես թույլ չեմ տա այդ, մինչև դարձյալ մենք մեր տեղը չգրավենք» (Դպր. IV, գլ. ԾԴ, էջ 259):

Շապուհը այս գործողությունը կրկնում է առավոտից մինչև երեկո: Ըստ այս ավանդության Արշակը ոգևորություն և քաջություն էր ապրում, երբ քայլում էր Յասատանից բերված հողի վրա, իսկ խորանի բնական հողի վրա լալիս էր, գոջում արտահայտում:

Մերուժան Արծրունին նույնպես իր կյանքի վերջում, երբ պատրաստվում էր մի վճռական ճակատամարտի, դիմում էր հմայողներին և հարցնում նրանց կարծիքը կռվի վախճանի մասին. «... սկսեց հմայություններ անել, բախտփորձումի գարեր ձգել, բայց այս կախարհություններից ոչ մեկը հաջող նշան չէին տալիս, որոնց հույս ուներ» (Դպր. V, գլ. ԽԳ, էջ 355): Մենք գրքի բազմաթիվ էջերում հանդիպում ենք երդվելու արարողությունների, ինչպես օրինակ՝ «Պարսից արքա Շապուհը երդվեց արեգակի, ջրի ու կրակի վրա» (Դպր. IV, գլ. ԺԶ, էջ 199), կամ «Արշակին երդվեցնել են տալիս հավատարմության ուխտի Աստվածային Ավետարանի վրա» (Դպր. IV, գլ. ԺԶ, էջ 197) և այլն:

Գրքում ուշագրավ հաղորդում կա Ս. Հակոբ հայրապետի, աստծուց շնորհված Նոյյան տապանի փայտե մի կտորով հայրենիք վերադառնալու, նրա անունով Արարատ լեռան վրա բացված Ս. աղբյուրի մասին: Ի դեպ նա Նոյյան տապանի հանգրվանը համարում է Կորդվաց աշխարհի Սարարադ լեռը: Այդպես են հավաստել նաև այլ հեղինակներ:

**Առողջապահություն, բժշկություն:** 301 թ. հետո, երբ հիմնվեցին քրիստոնեական վանքեր, նրանց կից բացվեցին առաջին հիվանդանոցները: Պատմիչը զգալի տեղեկություններ է հաղորդում առողջապահական հարցերի վերաբերյալ: Նա մեծ գովեստով է խոսում Ներսես Մեծ կաթողիկոսի շինարարական գործունեության մասին:

Բուզանդը հաղորդում է, որ Ներսեսի օրոք որոնում, գտնվում էին պատշաճ տեղեր, որտեղ պետք է աղքատանոցներ շինեին և հավաքեին ախտավորներին, բորոտներին, հաշմանդամներին, ցավագարներին: Որոշեցին շինել ուրկանոցներ, սահմանել նրանց սնունդ և դարման (դեղ, բուժամիջոց), իսկ աղքատների համար՝ պատսպարան (IV դպր., գլ. Դ., էջ 121):

Պատմում է, թե ինչպես Ներսես Մեծը Հայոց աշխարհի բոլոր կողմերում հիվանդանոցներ է հիմնում՝ բորոտների համար՝ բորոտանոցներ, հիվանդների համար՝ հիվանդանոցներ, հաշմանդամների և կույրերի համար՝ ապաստարաններ: Այսպես. «Եվ այնքան մեծ էր նրա աղքատսիրությունը (կաթողիկոս Ներսես Մեծի), որ թեպետ բոլոր գավառներում աղքատանոցներ շինեց և նրանց համար դարման նշանակեց, այնպես որ իրենց անկողիններից վեր կենալուց ավելի նեղություն չքաշեն, բայց և այնպես առանց նրանց սեղան չէր նստում, այլ կաղերը, կույրերը, հաշմանդամները, խուլերը, տնանկները (անտուն, անտեր), կարոտյալները նրա հետ սեղան էին նստում ու կերակրվում: Եվ ինքը իր ձեռքերով բոլորին լվանում էր, օծում, վերքերը կապում, իր ձեռքով նրանց կերակուր էր բաժանում, իր բոլոր ունեցածը նրանց վրա էր ծախսում. բոլոր օտարականները նրա մոտ, նրա հովանու տակ հանգիստ կերակրվում էին»: (Դպր. IV, գլ. Դ, էջ 123): V դպր., ԼԱ գլխում էլ գրում է, թե Ներսեսի քահանապետության ժամանակ Հայաստանի բոլոր գավառներում և գյուղերում նրա հրամանով շինված էին օտարանոցներ և հիվանդանոցներ, և Հայոց աշխարհի բոլոր մարդիկ ողորմածությամբ սնունդ էին մատակարարում՝ հիշելով աղքատներին, նեղված-տառա-

պածներին, օտարներին, հարստահարվածներին... Նրանց վրա սուրբ Ներսեսը վերակացուներ էր նշանակել և ուտեստ որոշել զանազան տեղերից (էջ 351):

Դրանք Հայաստանի բնակավայրերից դուրս վայրերում էին կառուցվում, «որոնց մեջ փակում էին հիվանդներին և նրանց հարկավոր մթերքները և այլ պիտույքները մի փոքր բացվածքի միջով ներս էին ձգում նրանց ամանների մեջ» (III դպր., գլ. Դ, էջ 121): Փաստորեն ուրկանոցները հասարակական բնույթի հիմնարկներ էին, ուր հավաքում, պահում էին բորոտներին, մաշկային վարակիչ հիվանդներին:

Այսպիսով, Ներսես կաթողիկոսի օրոք մեկուսացվում էին վտանգավոր հիվանդություններով տառապողները հատուկ տեղերում և խնամք էր տարվում նրանց նկատմամբ:

Փավստոս Բուզանդը խոսում է նաև Ներսես Մեծի բժշկելու շնորհների մասին. «Նրա առաջ էին բերում իրենց հիվանդները և նա բժշկում էր նրանց, որի համար գոհությամբ ու փառք էին տալիս աստծուն, բոլոր մարդիկ այնպես էին սիրում հովվապետին, որ համարում էին, թե իրենք ևս նրա հետ գերությունից ետ են դարձել» (IV դպր., գլ. ԺԳ, էջ 173):

Իր քարոզներում Ներսես Մեծն անդրադարձել է առողջության պահպանման առնչվող քրիստոնեական բարոյախոսության ու ապրելակերպի մի շարք հարցերի: Նա խրատում էր, որ ամուսնության մեջ օրինավոր լինեն, որ ամուսնացածները իրար չխաբեն, իրար դավ չսարքեն, հեռու մնան ազգակցական մերձավոր խառնակ ամուսնությունից, մանավանդ հարսների հետ մերձավոր ամուսնությունից և սրանց նմաններից: Եվ կանոն էր դնում սատկած անասուն և արյուն չուտել, ամսականի (դաշտանի) ժամանակ կնոջը չմերձենալ, որովհետև դրանք պիղծ են տիրոջ առաջ: Ահա նման պիղծ, «դևերի, սատանաների, սպիտակ օձերի» պատճառած հիվանդության մի տեսակ էր համարում նաև արվամուլությունը, անասնամուլությունը, իզանալը ուրիշներին և այլն (IV դպր., գլ. ԽԴ, էջ 241, 243):

Մեկ այլ առիթով, երբ մասքութների առաջնորդ Սանեսանը բազմամբոխ զորքով արշավում է Հայաստան, ավերում, ասպատակում է երկիրը՝ դիակների և արյան հոտից ապականվում է օդը: Հայոց թագավորը մեծ եպիսկոպոսապետի հետ եկավ ճակատամարտի տեղը: Տեսան սպանված զորքերի կորուստը. մեռածների հոտից երկիրը լցվել էր գարշահոտությամբ: Անմիջապես հրամայվում է այդ ամբողջ տարածությունները ծածկել խիճերով ու քարերով, որպեսզի գարշահոտությունը չտարածվի: Հրամայվում է աշխարհից գուգազ<sup>1</sup> հանել, դիակները թաղել, վրան քարերով ծածկելով, միգուցե երկիրը ապականվի գարշահոտ շարավից (թարախից) (III դպր., գլ. Է, էջ 31, III դպր., գլ. Դ, էջ 121):

Բուզանդի տեղեկությունից իմանում ենք, որ վաղ միջնադարյան Հայաստանում հայտնի էր դեղափնեների և թույների գործածությունը: Բուզանդը այս առթիվ գրում է. թե «Փառանձեմ (թագուհին) մեծ նախանձով ու ոխով լցված էր դեպի Ոլոմպին (Օլիմպիան) (Արշակ արքայի երկրորդ կինը, որը Հռոմի կայսեր ազգականն էր) և միջոց էր որոնում՝ **դեղերով նրան սպանելու**, բայց չէր կարողանում ոչ մի հնարք գտնել, որովհետև Ոլոմպին շատ զգույշ էր իր անձին, մանավանդ կերակուրների և ընկերների մեջ...»: Իվերջո թագուհի Փառանձեմին հաջողվում է արքունիքի երեց Մրջյունիկի միջոցով հաղորդության հացի հետ սպանիչ դեղ խառնելով վերջ տալ

<sup>1</sup> Գուգազ հանել՝ – պարտադիր կարգով աշխարհագոր հավաքագրել՝ ֆիզիկական աշխատանքների համար:

Օլիմպիայի կյանքին «Այդ **երեցը**՝ իր պաշտոնին անարժանը, չարագործության համար Փառանձեն թագուհուց ստանում է պարզև իր ծննդավայր Գոմկունք գյուղը»: (Դպր. IV, գլ. ԺԵ, էջ 193):

Գրքում ակնարկ կա նաև Պապ թագավորի կողմից «Հայոց հայրապետ Ներսես Մեծին թունավորելու մասին. «...ընթրիքի ժամանակ անապակ գինի էր մատուցանում աստծու մարդուն՝ Ներսեսին, և ընպելիքի մեջ մահվան դեղ խառնելով՝ նրան առաջարկեց: Երբ (Ս. Ներսեսը) այդ բաժակը խմեց՝ իսկույն հասկացավ...» (V դպր., գլ. ԻԴ, էջ 333):

Խոսում է նաև իր ժամանակի բուժամիջոցների և բժշկության մասին: Ներսես Մեծ կաթողիկոսը «Երբ իր կառուցարանը հասավ, պարեգոտը բացեց և ցույց տվեց սրտի վրա մի տեղ, ուր կապուտակել էր, մի **նկանակի** (հացի) մեծությամբ (V դպր., գլ. ԻԴ, էջ 333): Մեծամեծ նախարարները նրան **թյուրակե** (դեղթափ, հակաթույն) էին մատուցանում՝ փրկելու համար»:...Բերանից զուճ-զուճ արյուն գալը մատնանշում էր, որ Ներսես կաթողիկոսի թոքերի մեջ մի մեծ երակ է ծակվել, որի հետևանքով արյունաքամ է եղել ու վախճանվել: Համենայն դեպս նրա մահը թունավորվելուց չի եղել, և Պապ թագավորը զուր տեղն է մեղադրվել իբրև Ս. Ներսեսի թունավորող: Պապը Ներսեսի մահից հետո ոչնչացրեց նրա հիմնած բարեգործական հաստատությունները և, մանավանդ, հոգևորականության հողերի մեծ մասը խլեց<sup>1</sup>:

Բուզանդը հիշատակում է զանազան վարակիչ հիվանդություններ, օրինակ՝ ժանտախտ հիվանդությունը, որին, ըստ նրա հիշատակության, զոհ են գնում նոր հիմնադրված Արշակավանի 20.000 ընտանիք: Պատմիչը Արշակավանի կործանումը (358 թ.) նկարագրելիս նշում է, որ Արշակավան գյուղաքաղաքը հարձակման ենթարկվելով՝ «մարդկանց և անասունների վրա սկսեցին դուրս գալ չարորակ պալարներ, որ ոմանք կոչում էին ժանտ (IV դպր., գլ. ԺԳ, էջ 177): Սա ժանտախտ համաճարակ հիվանդության առաջին հիշատակությունն էր հայ մատենագրության մեջ: Մի ուրիշ ժանտախտի դեպք էլ է հիշում: Այն տեղի ունեցավ Արտագերս ամրոցում և մի ամսում 17000 մարդ կոտորվեց. «Տասնչորսերորդ ամսից հետո Աստուծոց հարված հասավ բերդում ապաստանած գաղթականների վրա. բերդում եղողների մեջ մահ ընկավ, աստվածային պատուհաս: ...մի ժամում հարյուր մարդ, մյուսում երկու հարյուր, պատահում էր, որ մինչև հինգ հարյուր մարդ մեռնում էին՝ մինչ սեղան բազմած էին լինում: Եվ այսպես օրեցօր կոտորվում էին: Մահը սկսվելու օրից մի ամիս էլ չքաշեց, որ բոլորը կոտորվեցին, մոտ տասն և մի հազար տղամարդ և մոտ վեց հազար կին. մի ամիս չանցավ՝ որ բերդում եղածները բոլորը կոտորվեցին. բերդումը մնաց միայն տիկին Փառանձենը երկու նաժիշտով» (IV դպր., գլ. ԾԵ, էջ 265): Նա վարակիչ հիվանդություն համարելով **ուրկությունը**՝ բորոտությունը կամ գողությունը, և այն էլ սաստիկ վարակիչ ու անբուժելի, «ամենավաղ ժամանակներից ամեն տեղ մեծ զգուշություններ էին ձեռք առնում, որ այս հիվանդությունն ունեցողները շփում չունենան առողջների հետ և նրանց չվարակեն»:

Հիվանդությունների պատճառներից էր համարվում զեխ ու շվայտ կյանքը, մըշտապես «մսեղեն և գինի ճաշակելը, որոնք որովայնը պարուրում ու երիկամները ճարպով պատում են, որոնցից բազմատեսակ անօրինություններ են ծագում (IV դպր., գլ. Ե, էջ 135):

<sup>1</sup> Տես Փ. Բուզանդ, Հայոց պատմություն, ծանոթ. 189, էջ 441:

Փավստոսի երկուն հանդիպում ենք նաև աղոթքով, հմայությամբ բժշկելու հաստատագրված վկայություններ: IV դարության Դ գլխում ամբողջությամբ խոսվում է Ներսես Մեծի խոսքով, աղոթքով, հավատքի ուժով բժշկելու կարողության մասին: Այդ նույն կերպ խաղ եպիսկոպոսի կողմից բուժվում են գողերի աչքերը կուրացումից, որոնք հանդգնել էին գողանալ եկեղեցուն պատկանող եզները (IV դար., գլ. ԺԲ, էջ 171): Պատմիչը խոսելով խաղ եպիսկոպոսի աստվածապաշտ ու հայ առաքելական եկեղեցուն անսահման նվիրվածության մասին՝ վկայում է, թե նա «խնամում էր աղքատներին, նրա ձեռքով կատարվում էին շատ նշաններ<sup>1</sup> ու սքանչելիքներ, հիվանդների բժշկություններ: Բայց երբ նա օգնում էր աղքատներին և դատարկում էր բոլոր կճուճներն ու ամանները՝ մառանի բոլոր կաթսաները աղքատներին բաժանելով... հետո աղոթքի կանգնելով, գողերի աչքերը (կուրացած) բժշկեց, հրամայեց նրանց լողացնել, ապա նրանց առաջը ճաշ դրեց և շատ ուրախացրեց (Դար. IV, գլ. ԺԲ, էջ 171):

Մի այլ առիթով էլ գրում է, թե անապատական՝ մենակյաց, ճգնավոր կյանք վարող հոգևորականները բժշկում էին շրջակայքի բնակավայրերի մարդկանց: Նրանցից «սուրբ Գինդը և նրա հետ եղողները լցված էին սուրբ հոգով, նրա նման սրանք էլ կատարում էին մեծամեծ նշաններ և շատ սքանչելիքներ, հիվանդներ էին բժշկում Հիսուս Քրիստոսի անունով» (V դար., գլ. ԺԶ, էջ 415): Բուզանդը գրում է նաև, թե ձախորդություններից և անհաջողություններից խուսափելու միջոցներից մեկը հմայություններ անելն է, բախտ փորձելը: Խոսքը հայրենիքին դավաճանած Մերուժան Արծրունու կատարած կախարդություններն էին, որոնցից ոչ մեկը հաջողություն չբերեց նրան (V դար., գլ. ԽԳ, էջ 385):

Ուշագրավ է զորավար Մանվելի մահվանից առաջ այն խոսքերը, որոնք այժմ էլ հնչում են բացառիկ ռազմահայրենասիրական շնչով: Ջորավարի պատերազմներում ստացած վերքերը ծածկել էին նրա ամբողջ մարմինը, միայն «առնի անդամի վրա ավելի քան հիսուն սպի կար», մինչև անգամ այս բանալով ցույց էր տալիս ամենքին: Սկսեց լալ և ասել. «մանկությունից հետո ես պատերազմների մեջ եմ մեծացել, ամեն վերք հանձն առա քաջությամբ, և ինչո՞ւ ես բախտ չունեցա պատերազմի մեջ մեռնելու, քան թե այսպես անասունի պես մեռնեի: Որքա՞ն լավ կլինե՞ր՝ եթե պատերազմի մեջ մեռնեի աշխարհի համար, որպեսզի եկեղեցիները և աստծու պաշտոնյաների ուխտը ոտնատակ չլինեին: Ո՞ր էր, թե ինձ վիճակվեր մեռնել մեր աշխարհի բնիկ Արշակունի տերերի համար, մեր կանանց ու որդոց համար, աստվածապաշտ մարդկանց, եղբայրների, ընկերների և մտերիմ բարեկամների համար: Ես շատ հանդուգն էի ինձ պահում պատերազմների մեջ, բայց և այնպես ինձ վիճակվեց մեռնել վատթար մահով՝ անկողնում պառկած» (V դար. գլ. ԻԴ, էջ 393):

**Երաժշտություն և թատերականացված ներկայացումներ:** Բուզանդը ակնարկներ ունի նաև հայոց վաղ միջնադարյան նվագողների, նվագարանների մասին՝ **փանդիռ**, **վին** (լարային գործիք), թմբուկ, սրինգ, քնար, փող: Սրանք նվագարաններ էին, որ տարածված էին թե՛ ավատատերերի, թե՛ հասարակ ժողովրդի և թե՛ զինվորականության շրջանում: Խոսում է Գրիգոր Լուսավորչի թոռների՝ Յուսիկի որդիների Պապի և Աթանազիսի անառակաբարո վարքի մասին՝ «զինի էին խմում բոզերի, **վարձակների**, գուսանների և ծաղրածուների հետ» (Դար. III, գլ. ԺԹ, էջ 77):

<sup>1</sup> Նշաններ ասելով պատմիչը նկատի ունի՝ ցուցմունքներ, խորհուրդներ տալ, հրաշքներ գործել (տե՛ս 3. Աճառյան, Հայրեն արմատական բառարան, հ. III, էջ 460):

Վաղ միջնադարյան երաժիշտներին անվանում է գուսաններ: Գուսան պահլավերեն բառ է, որ նշանակում է երաժիշտ, երաժշտություն: Այստեղ պատմիչը հիշատակում է նաև վարձակ պահլավերեն բառը, որ նշանակում է խնջույքներում կամ թատրոններում երգող, նվագող: Պատմագիրը մի այլ տեղում հիշատակում է հայոց «լավ սպառազինված զորքի» մասին, որը բաղկացած է «ընտիր ռազմիկ մարդկանցից»՝ բազմաձայն պատերազմական փողերով (Դպր. IV, գլ. Ի, էջ 205):

Ողբի հեթանոսական սովորույթներին անդրադառնալիս դառնությամբ գրում է, թե մեռելներին ողբում էին **փողերով, փանդիռներով ու վիներով**»։ «Ներսեսի մահից հետո, երբ մեռելները ողբում էին՝ փողերով, փանդիռներով ու վիներով կոծի պարեր էին բռնում, մորուքները կտրած, երեսները պատառոտած, կին և տղամարդ դեմ առ դեմ ճիվաղական պարեր խաղալով, ծափ զարնելով հուղարկավորում էին մեռելները» (Դպր. V, գլ. ԼԱ, էջ 351): Հույն Տերենտ զորավարի՝ Պապ թագավորի դեմ կազմակերպած դավադրության մասին գրում է. «Երբ սկսեցին խմել՝ ուրախության առաջին բաժակը մատուցին Պապ թագավորին, և իսկույն հնչեցին **թմբուկներն ու սրինգները, քնարներն ու փողերը** իրենց ներդաշնակ ձայներով: Վահանավոր զորքին հրաման տվին, և մինչ Պապ թագավորը ուրախության զինին բռնած էր մատներով և նայում էր գուսանների խմբին...» (V դպր, գլ. ԼԲ, էջ 355):

Հիշատակված **վին** և **փանդիռ** երաժշտական երկու գործիքների անվանումները օտար ծագում ունեն. վին արևելյան, իսկ փանդիռը՝ փոքրասիական, որտեղից անցել է Հունաստան և այլ տեղեր: Երկուսն էլ լարային նվագարաններ էին, բայց ինչով էին իրարից զանազանվում, հայտնի չէ: Փանդիռն սկզբնապես երեք լար է ունեցել, որ հետո զանազան կերպարանափոխությունների է ենթարկվել:

*Рафик Нагапетян. – Характеристика некоторых элементов гуманитарной культуры средневековой Армении в произведении Пафстоса Бюзанда “История Армении”. – Произведение известного историка 5-го века Пафстоса Бюзанда “История Армении” не только важный источник историко-политических событий 4-го века, но также содержит информацию о культурной жизни, об образовании, об особенностях народного мышления, о языческой вере, о медицине, о музыкальных и театральных представлениях.*

*Rafik Nahapetyan. – The description of some elements of culture in Armenia in the early middle ages in “Armenian History” by Pafstos Buzand. – The work “Armenian History” by the 5<sup>th</sup> century famous historian Pafstos Buzand is not only an important source of the 4<sup>th</sup> century historical and political events but also of the national ethnographic phenomena. There is important information about the spiritual culture, especially about the education, national way of thinking, belief and pagan worshipping, as well as holidays.*

The historian gives information about different diseases and medicine, musical and theatre performances presented in the sphere of science for the first time.

